ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, 091435136, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

21.11.2016թ.
309-ի 9

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարար պարոն Արտեմ Ասատրյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ասատրյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ կետի Ձեր ղեկավարած գերատեսչությունում նշանակվե՞լ է արդյոք տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձը:
   Եթե այո, ապա՝
2. Տեղադրվա՞ծ է արդյոք ՏԱ համար պատասխանատու պաշտոնյատար անձի մասին տեղեկատվությունը (անունը, ազգանունը, իր հետ հետադարձ կապի միջոցները (հեռախոս, էլ. փոստի հասցե) գերատեսչության կայքում (եթե այո, ապա խնդրում եմ նշել հիպերհղումը),
3. Խնդրում եմ տրամադրել այն իրավական ակտի պատճենը կամ դրա հրապարակման հիպերհղումը, որով նշանակվել է ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

Լիանա Դոյդոյան
Նախագահ